

ԳՈՒՐԳԵՆ ԱՇՈՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՍՀ Մշակույթի նախարար (1980-1985 թթ.), «Սովետական Արվեստ» ամսագրի գլխավոր խմբագիր 1986-ից, խսկ 1996-1997թթ. վերջին համարում (արդեն հեղանահու) պատվավոր գլխավոր խմբավիր

Հողվածը հրատարակվում է որպես հարգանքի տուրք անվանի մտավորականին և մեր երախտիքն ենք հայտնում «Առնո Բաբաջանյանի հիշատակի» հիմնադրամին տրամադրելու այն:

Մարդու կերպած մեծ արվեստը, ժրպիտն ու դիմախաղը իրեն գրավեցին բոլորի հոգիներում՝ Երևանում, Գիլիջանում, Մոսկվայում, Փարիզում, Մարսելում... Մարդիկ նրա կարոտն էին զգում, հանդիպում էին, զրուցում, կատարում (կատարում էր ավելի շատ ինքը), հրաժեշտ էին տալիս ու մտածում, թե ե՞րբ են նորից հանդիպելու: Լսում էին նրա նվագը, հաղորդակցվում արվեստին: Մեղեդին, դաշնամուրի ամեն մի ակկորդը մնում էր հոգում՝ երկա՛ր, եր-

րի և ուժերի վերելքի շրջանում: Թողնելով երաժշտ-տյունի հրաշալի մի ժառանգություն, որ սրեղծվել է չորս տասնամյակների ընթացքում ու միշտ պահպանել է իր անկրկնելի անհատականությունը:

Բաբաջանյանի այդ ինքնատիպությունը առկա է նրա մարդկային բնութագրի և գործունեության բոլոր ոլորտներում:

Արտիստիկ կերպար, ուսուցչի ոչ ավանդական մեթոդիկա, դաշնակահարի հիրավի հիպոսուացնող ազդեցություն և, վերջապես, լավագույնների շարքը դասվող նրա շար երկերում Արարողի շնորհի խիստ շոշափելի ներկայություն: Հենց Աստվածային այդ ներկայությունը, տարերքի ուժը ունկնդրի ընկալմամբ, Ա. Բաբաջանյանին դարձնում են միաժամանակ թե՛ հսկա, և թե՛ առօրեական, եզակի մի երևույթ:

Նա անհայտ էր, որ առանձնանում էր բարձրա-

7 5 - ամյակին ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ.

«Եթե ես կոմպոզիտոր չլինեի...»

կար... Նրան զհրեին և սիրում էին բոլորը: Կինո-թատրոններում, համերգասրահներում, փողոցներում, այգիներում. րներում նրա երգն էր հնչում, նրա մեղեդին էր տրամադրություն սրեղծում, Հասարակի կարոտն առնում, սիրում, երագում...

Մի անգամ, հանդիպելուց հետո, նրան փնտրում էին շարերը, նրա խոսքերն էին կրկնում, միմյանց հաղորդում:

Յուրի Բելկինի բախտը բերեց: Եվ ոչ միայն նրա, այլև նրանց զրույցին ներկա շարերի: Այդ զրույցը տպագրվեց ամսագրերում: Ներկաները կարդացին: Հետո, երբ նա հեռացավ... դարձյալ հիշեցին այդ զրույցը, նորից կարդացին:

Առնո Հարությունի Բաբաջանյան: Ամեն մեկը նրա մասին իր պատմությունը կամ պատմությունները գիրք: Այս մեկն էլ Յուրիինն է: Եվ զրույցին ներկա գրնվողներինը...

Կորուստներ կան, որոնց երբեք չես համակերպվում: Ավելին, տարիների ընթացքում դրանք առավել հիվանդագին են ընկալվում: Եվ դա, թերևս, այն պարճառով, որ թվում է, թե կյանքն «իրենը կվերցնի», որ կզան փոխարինողներ և, ի վերջո, երկրի վրա անելիքներ շար կան: Սակայն իրականում սրագվում է հակառակը. ժամանակն անցնում է, բայց ի սկզբանե արած դաժան ընկրությունը պահպանվում է առհավել, քանզի ոչ ամեն թափուր տեղ է, որ հնարավոր է լրացնել...

Առնո Բաբաջանյանը ...հեռացավ կյանքից 62 տարեկանում՝ սրեղծագործական մրահագումնն

գույն անմիջականությունն իր մեջ «փայլալույզ» կարևոր մի հատկանիշով: Ինչ թվում էր, որ անմիջականությունը, մրահագումների և արտահայտչամիջոցների անեղծությունը Բաբաջանյանի համար ոչ միայն գեղարվեստական, այլև մարդկային չափանիշներ էին, այդ բառի ամենալայն իմաստով:

Նա երբեք չէր վախենում ավելի վաղը թվալուց, քան վայել էր իր դիրքին ու մեծության մարդուն: Նա չէր ամաչում իր թուլություններից: Չէր բարցնում սրեղծագործելու ընթացքում իր առջև ծառացած դժվարությունները՝ կոմպոզիցիայի գաղտնիքներին հասու վարպետ-արտֆեստրոնալի դասին իբր չնը-թագնելու «սահից»:

«Վեց պարկերները» գրելուց արդեն շատ տարիներ հետո, չօգրվելով կեղծ համեստությունից, Բաբաջանյանը խոսում է իր համար Անրոն Վեբերնի «Վարիացիաների» նշանակության մասին, որ իբրև կողմնորոշիչ էր ծառայել իր երկերի սկզբունքները մշակելիս: Եվ ընդգծում էր. «Գիտե՞ք, թե որքան եմ տանջվել»:

Ա. Հ. Բաբաջանյանը մեզ է թողել երաժշտություն, որ ազգային դասական է դարձել:

Փողոցում նրան խկույն ճանաչում էին: Ծանաչում էին խոշոր դիմագծերի, ժպիտի, իրենից անբաժան կատարների շնորհիվ: Ու եթե երաժիշտ չլինեիր, հասարակ դառնալու էր կոմիկ դերասան կամ էլ ծիծաղաշարժ պատմվածքների հեղինակ: Ուզեցի զրուցել հետը.

- Եթե կոմպոզիտոր չդառնայիր, ինչո՞վ պիտի

գրադվեիք:

*Առանց երկար-բարակ մտածելու, Բաբաջանյանն ասաց, որ ինքը «կամ կոմպոզիտոր պիտի դառնար կամ գյուտարար, այսինքն՝ կնվիրվեր ստեղծագործելուն:*

Ես սիրում եմ ձեռքի աշխատանքը: Ընկերներիցս մեկն ասաց՝ լավ է քիմիկոս չդարձար, թե չէ վաղուց հոդս ցնդած կլինեիր...»

*Կոմպոզիտորն ապրում էր Օգարյովի փողոցում: Բնակարանում ծայրեծայր նուրաներ էին. նուրաներ սեղաններին, աթոռներին, դաշնամուրի նուրակալին, և նույնիսկ՝ գեղերին: Ապակեպար փոքրիկ սեղանին կնիքով զմռսած անզվերեն պարվորներ էին, ուր վավերացվում էր. «Թեքսասի նահանգի պատվավոր քաղաքացի Անոն Բաբաջանյանը նահանգի օրենքների համաձայն կարող է օգտվել բոլոր իրավունքներից, արտոնություններից և այլ լիազորություններից»: Պարվորները հիշեցրեցին ԱՄՆ-ի հյուրախաղերը: Բնակարանը լի էր ամենաարարքեր երկրների հուշակվերներով, իսկ պարերին փակցված էին կոմպոզիտորի ստեղծագործությունները:*

«Այս կտավներում իմ սերն է առ երաժշտությունը և մարդկանց սրտերը հուզելու իմ փափագը: Երաժշտությունն իրավունք է տալիս խոսելու վեհի ու վսեմի մասին, հույս է ներշնչում: Ես գրում եմ ամեն օր: Իսկ ծավալուն ստեղծագործությունները գրվում են դժվարությամբ: Դրանք ծնվում են, երբ կենսական հզոր տպավորությունները կուտակվում են հոգուդ մեջ և հանգիստ չեն տալիս: Գրողը վեպեր է գրում կամ ակնարկներ, իսկ երգը ապրած օրվա անմիջական արձագանքն է և ասես հայելու մեջ մի արտացոլում է հենց նոր վերապրածդ: Երգերը ծնվում են կյանքի սուր ընկալումներից, ծագում է արևը և բարձր է տրամադրությունը, ու հանկարծ հեռավոր մի մեղեդի ես լսում...»

Ասեմ, որ գրում եմ դանդաղ: Իմ ուզածը երկար եմ փնտրում: Թող ուշ լինի, բայց լավ»:

*Ինչպե՞ս եղավ, որ Ձեր կյանքը կապեցիք երաժշտության հետ:*

Մի օր Մոսկվայից մեր մանկապարտեզ եկավ մի քեռի, որ ուզում էր ստուգել երեխաների երաժշտական լսողությունը: Երբ հերթն ինձ հասավ, մոսկվացի հյուրն ասաց.

«Մա անպայման պիտի երաժշտական կրթություն ստանա»: Ուրախ տուն եկա և պատմեցի հայրիկիս: Այն ժամանակ ես հինգ տարեկան էի: Շատ տարիներ հետո իմացա, որ մոսկվացի քեռին Արամ Խաչատրյանն էր: Հենց այդ տարի էլ հայրս ինձ տարավ երաժշտական դպրոց: Հետո սովորեցի Երևանի կոնսերվատորիայում, իսկ 1938-ին, 17-ամյա երիտասարդս հայտնվեցի Մոսկվայում: Ուզում էի կոնսերվատորիա ընդունվել: Քննություններս բարեհաջող հանձնեցի, սակայն ցուցակներում իմ ազգանունը չգտա: Ինձ չոր ու կոպիտ ասացին. «Դուք եկել եք առանց Երևանի կոնսերվատորիայի թույլտվությունն ստանալու՝ ձեզ չենք կարող ընդունել»: Ես պարզապես կորցրեցի ինձ՝ ուրեմն անշնորհք եմ: Սակայն տեղն ու տեղն էլ որոշեցի, որ ավելի լավ է այստեղ՝ Կուրսկի կայարանում ծանր ու մեծ պար-

կեր քարշ տալ, քան վերադառնալ Երևան: Բարեբախտաբար, Խաչատրյանն ինձ տարավ Ելենա Գնեսինայի մոտ, և ամեն ինչ իր հունի մեջ մտավ...

*Ձեր ո՞ր ստեղծագործությունն է ամենասառաջինը:*

Խոստովանեմ, որ առաջինը համարում եմ «Հեռուսական բալլադը» և Դաշնամուրի 1-ին Կոնցերտը, որ նվագեցի Երևանում և Մոսկվայում: Եվ կամ՝ դաշնամուրային Վեց պատկերները, որով Հայաստանի Պետական մրցանակ ստացա: Այս ստեղծագործությունն ինձ համար սովորական չէր. ես փորձեցի գրել «սերիական» երաժշտություն՝ հայկական ոճով:

*Այո, այսպեղ, Բաբաջանյանին հաջողվեց մեկտեղել և՛ ազգային կոլորիտը, և՛ արդիական կոմպոզիտորական տեխնիկան՝ միաժամանակ պահպանելով հեղինակի անհարական դեմքը:*

... Առնոն մեծ սիրով էր կապված Գ. Գ. Շոստրակովիչի հետ:

«Դիլիջանի ստեղծագործական տանն էի, - պարունում է Առնոն, - տրամադրությունս աշխատանքային էր, գործնական: Մեկ էլ ռադիոյով լսեցի Գ. Շոստակովիչի մահվան բոթը: Յնցված էի: Ինչքա՞ն բան է արել նա ինձ համար: Ես բարձր էի գնահատում այդ հիանալի մարդուն և մեծագույն կոմպոզիտորին: Մեկ էլ հանկարծ ներսումս նրա մահվանը երաժշտությամբ արձագանքելու պահանջ զգացի: Հենց այդ գիշեր էլ գրեցի Կվարտետի առաջին էջերը և հետագայում էլ չփոխեցի ոչ մի նոտա:

Կորցրեցինք նաև Արամ Խաչատրյանին: Ես դարձյալ ցանկություն ունեցա երաժշտությամբ արձագանքել նրա կորստին: Եվ գրեցի դաշնամուրային Էլեգիա, ուր օգտագործված է մեծն Սայաթ-Նովայի մեղեդին: Ի դեպ, այստեղ մի նախապատմություն կա: 1938-ի ամառային արձակուրդներին եկա Երևան: Տեղեկացա, որ Հայաստանի կառավարության հրավերով Երևան էր ժամանել Ա. Խաչատրյանը: Նա պիտի գրեր իր «Երջանկություն» բալետը՝ Մոսկվայում կայանալիք հայկական տասնօրյակի առիթով: Ես իսկույն ևեթ ներկայացա Խաչատրյանին: Ապրում էր քրոջ տանը՝ Տպագրիչների փողոցում: Նրա հյուրն էր նաև դուդուկահար՝ վարպետ Մարգարը: Հենց վարպետը անձանոթ մեղեդի էր նվագում, Արամ Իլիչը տեղնուտեղը գրի էր առնում, իսկ ծանոթ մեղեդի լսելիս, իսկույն կանգնեցնում էր. «Գիտեմ, առաջ անցիր»: Կոմպոզիտորը նյութ էր հավաքում իր ապագա բալետի համար: Հետո վարպետը նվագեց Սայաթ-Նովայի երգերից մեկը: Խաչատրյանը չընդհատեց նվագը, ապա շուռ եկավ ու բացականչեց. «Ինչ հանճարեղ մեղեդի է: Ինչպե՞ս եմ ստեղծվում նման մեղեդիները»:

Եվ այս մեղեդին էլ մտավ Խաչատրյանին ձևաված իմ ստեղծագործության մեջ: Խաչատրյանի կորուստը ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև համաշխարհային մշակույթի անդառնալի ու մեծ կորուստն էր»:

*Ձեր երգերից շատերը մեծ ժողովրդականություն են վայելում: Ինչպե՞ս անդրադարձաք երգի ժանրին:*

Երգ գրելու հնարավորությունն ինձ կինոն տվեց:

«Ամայրայի արահետներով», «Հասցեատիրոջ որոնումները», «Առաջին սիրո երգը»: Այդ մեղեդիները հավանեց հանդիսականը և համընդհանուր ուշադրության արժանացան: Եվ այդպես էլ սկսեցի երգեր գրել ու մինչև օրս էլ չեմ հրաժարվում: Իբրև օրենք, կոմպոզիտորները մեղեդին հարմարեցնում են իրենց հավանած բանաստեղծության հանգ ու կապին: Իմ գործերակերպն ուրիշ է: Ես նախ զգում եմ մեղեդին, ապա խնդրում որևէ բանաստեղծի այդ հենքի վրա բանաստեղծություն գրել: Այսպես ծնվեց «Վերադարձրու ինձ երաժշտությունը», որի բանաստեղծական տեքստը գրել է Անդրեյ Վոզնեսենսկին:

Երբ տարածվեց իմ «Ճերմակ աղվամազիկ» երգը, շատերը մտածում էին, թե ռուսական ժողովրդական երգ են լսում: Եվ հարցնում էին ինձ. «Դո՞ւ ես մշակել ռուսական ժողովրդական այս երգը»:

«Ոչ, - պատասխանում էի, - ես եմ ստեղծել այդ երգը»: Չարմանում էին, չէին հավատում: Բայց ի՞նչ կար չհավատալու: Մի՞թե ես չեմ կարող ռուսական ժողովրդական երգ գրել: Չէ՞ որ կյանքիս մի մեծ հատվածը ապրել եմ Ռուսաստանում:

Չեմ ափսոսում, որ մտա երգային ժանրի խորխորատները: Երգի հանդեպ լուրջ վերաբերմունք ունեմ: Պատահում է, որ երգը գրավում է մոդայի բոլոր օրենքներով, բայց սառը, անհաղորդ սրտով: Նման երգերը այդպես էլ չեն երգվում: Մարդիկ զգում են, որ այդպիսի երգը հոգի չունի»:

*Երաժշտական 1-ին փառատրոնին՝ Ռաունդ Թփեում Պ. Չախկովսկու անվ. միջազգային մրցույթի դափնեկիր Ջեյն Դիքը մեծ հաջողությամբ կատարեց Ա. Բաբաջանյանի արեղծագործությունները: Եվ հասարակության անկեղծ հեղափոխությունն էլ կանխորոշեց Ա. Բաբաջանյանին. երկերը ԱՄՆ ուղարկելու գաղափարը:*

Սա իմ անդրանիկ հանդիպումն էր Ամերիկայի հետ: Համարյա մի ամբողջ ամիս համերգարահներում ու բաց հրապարակներում նվագում էի իմ և գործընկերներիս ստեղծագործությունները: Թեքսասի բնակիչներն ինձ դիմավորեցին հայկական ավանդույթով՝ ցերմ ու սրտաբաց: Համերգներին զուգընթաց ես դասախոսություններ կարդացի մեր երաժշտության մասին: Ես Խորհրդային առաջին երաժիշտն էի, որ տեսա Թեքսասը:

*Անցավ մի քանի փարի: Բաբաջանյանն աշխատում էր պարսկական եռանդով: Այո, մարդու փարիքը բնորոշվում է ոչ թե փարիներով, այլ արեղծագործական ոգով: Եվ Բաբաջանյանը, չնայած իրեն փանջող հիվանդությանը, անընդհար հիշեցնում էր իր մասին: Մեկնեց Դիլիջան, աշխատելու և այդպես էլ ընդմիջյալ մնաց Հայաստանում...*

*Մեր վերջին հանդիպմանը ես հարցրեցի նրան.*

*- Դուք չե՞ք քանի՞ փարեկան եք զգում:*

Հոգով երեսուն տարեկան եմ, - ժպտալով պատասխանեց նա, - բայց երեսուն տարեկան էի 1951-ին: Ազնիվ խոսք, այնպիսի զգացողություն ունեմ, ասես դա երեկ էր:

*Կարո՞ղ եք հիշել չե՞ր ամենաերջանիկ օրը:*

Ամենաերջանիկ օրը... Դժվարանում եմ ասել: Ուրախն ու տխուրը կյանքում զուգահեռ են ընթա-

նում: Անուշտ, երջանիկ օրերը անհամեմատ քիչ չեն: Եվ դա բնական է: Ուրախությունը տոն է, իսկ տոնական օրերը տարվա մեջ մատների վրա կարելի է հաշվել: Մնացած բոլոր օրերը «աշխատանքային են»: Երբ ծնվեց որդիս, ես երջանիկ էի: Երբ լավ ստեղծագործություն էի գրում և լավ կատարում էին՝ իմ հոգին երգում էր: Չզարմանաք, բայց ես անչափ ուրախացա, երբ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում ստացա: Գուցե իմ ամենաուրախ օրը դեռ առջևո՞ւմ է...

Պիտի բարձր կանգնել մանրուքներից ու կենցաղային տհաճություններից: Ոչ մեկին չպիտի նախանձել: Նախանձը ահավոր բան է, այն խանգարում է մարդկանց, նաև կոմպոզիտորներին: Այդպես է մարդու հոգում կուտակվում թույնը, իսկ թունավոր հոգով ինչպե՞ս կարող ես լավը ներկայացնել: Ես միշտ սիրել եմ ծնողներին, սիրում եմ ընկեր-բարեկամներին և հպարտանում, որ նրանք շատ են: Անցել եմ ամեն ինչի միջով և միշտ մնացել եմ ինքս ինձ հավատարիմ: Իմ ամեն արածը հետո ինձ թվացել է թերի, անկատար: Իմ նշանաբանն է եղել՝ գոհ չեմ, ես ավելի լավ կարող եմ անել:

*Կոմպոզիտորն ու իր երաժշտությունը կարո՞ղ են արդյոք ներգործել հասարակական կյանքի վրա:*

Ոչ կոմպոզիտորը, ո՛չ էլ որևէ արվեստագետ չի կարող ստեղծագործել հասարակությունից ու տարածությունից դուրս: Իսկական արվեստագետը իր արվեստը պիտի ծառայեցնի մարդատյացներին ու խավարամիտներին լուսավորելու գործին:

*Ահա և իմ վերջին հարցը.*

*- Դուք չե՞ք մոսկվացի՞ եք համարում, թե՞ երևանցի:*

Մի ոտքս այստեղ է, մյուսն՝ այնտեղ, - ծիծաղում է Ա. Բաբաջանյանը, - կյանքիս կեսն անցել է Երևանում, մյուս կեսը՝ Մոսկվայում: Բայց չէ՞ որ բոլորի համար էլ պարզ է՝ այն քաղաքը, ուր անց ես կացրել քո ամենալավ տարիները, մանկությունն ու պատանեկությունը, մեկընդմիջ կմնա իբրև ամենաթանկն ու սիրելին: Ես ամեն տարի լինում եմ Երևանում, առանց Հայաստանի ես ինձ չեմ պատկերացնում:

Արդեն քանի տարի ապրում եմ Մոսկվայում, բայց հայկական «ակցենտ» չեմ կորցրել...

Հայաստանը միշտ իմ սրտում է, ծնունդ առնող ամեն հնչյունիս մեջ...

*Տապանաքարի մուր, պարկերներ, հուշեր, հիշողություններ...*

*Դժվար է հաշիվել, որ նա չկա:*

Միայն մեկ վարդ, դեղին վարդ... վարդի թերթիկների միջից կարծես ժպտում է, ապա նայում թախծուր աչքերով: Ասում էր, որ եթե երաժիշտ չդառնար, անպայման կունիլ դերասան կլինեիր: Եվ կատարում էր, ծիծաղում անմիջապես լրջանում, հեղու ժրպտում...

*Իսկ կոմիկների աչքերը միշտ թախծուր են, ինչպես Չարլզ Չափլինի աչքերն էին, թախծուր ու մի քիչ խոնավ:*

*Ժպտում է վարդի թերթիկը:*

*Առնչի անմոռաց ժպիտը խոշոր ու կեռ քթի փակից...*

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄԵՐ

Մոսկվա: Տղաները շրապեցնում էին փաքսիի վարորդին: Ուշանում էին ներկայացումից: Կարմիր լույս: Մեքենան մի քանի մետր առաջ անցավ: Մուլոց: Կապիտանի ուսադիրներով միլիցիոները խիստ դեմքով մոտեցավ փաքսու վարորդին: Երթևեկության կանոնների խախտում: Իսկ փղաները շրապում էին, անհանգիստ նայում ժամացույցին: Դիմեցին կապիտանին՝ ոչ մի զիջում, խախտում է և վերջ: Եվ հանկարծ մեքենայից լսվեց ծանոթ երգը: Միլիցիոների դեմքը փոխվեց: Նա անբողջովին ուշադրություն էր: Հետո կարողացավ արտասանել. «Սատանան տանի, ի՞նչ լավ է»: Տղաներից մեկը համարձակվեց նշել. «Մենք էլ հենց նրա համերգին ենք շտապում»: Կապիտանը չզվեց, պարիով րվեց և շեշտված ասաց. «Կարող եք գնալ, սույժը՝ հաջորդ անգամ»:

Բաբաջանյանի երգն էին հաղորդում ռադիոյով: Մոսկվա: Մեծ թայրուն: Արամ Խաչատրյան. «Սպարտակ»: Ներկայացումից հետո գլխավոր դերակրոր Լոգինը հրավիրեց ծանոթներին՝ երեկոն միասին անցկացնել: Կհնոռեժիսոր Էդմոնդ Բյուսասյանը նախաձեռնությունն իր ձեռքը վերցրեց.

Գնացի՛նք: Մեքենան արագ պոկվեց րեդից: Եվ հանկարծ... Ավտոտեսչության երկու աշխատակից կանգնեցրեցին մեքենան: Բացարարությունները օգուր չրվեցին: Առաջարկեցին հետևել իրենց: Միջամտեցին կանայք՝ անօգուր: Տեսուչները համառ էին: Նրանցից մեկն անսպասելիորեն ասաց. «Այնպես եք բշում, ասես անորսալի վրիժառուները լինեք»: Էդիկն աշխուժացավ, իջավ մեքենայից և ձեռքի իրեն հայտնի շարժումներով, արագ-արագ խոսելով՝ ասաց ինչ-որ բան:

Տեսուչները հանկարծ չզվեցին, պարիով րվեցին և ... մեքենան սլացավ Մոսկվայի փողոցներով: Մեքենան ուղեկցում էին ավտոտեսուչների մուրցիկները: Բյուսասյանն ասել էր, որ «Անորսալիներ»-ի հեղինակն ինքն է.

«Մեզ համար պատիվ է ձեզ ուղեկցելը: Միշտ պատրաստ ենք», - ասաց րեսուչը: Ապա ավելացրեց. «Իսկ դուք ճանաչո՞ւմ եք մեր Առնոյին»: Ու նորից պարիով րվեցին...

Ռեսուրսանում մթնոլորտն ուրախ էր, աղմկուր: Նվագախումբը ճգնում էր խլացնել բոլորին: Մարուցողը մոտեցավ Առնոյին. «Հաշի՞վը»: «Ձեր հաշիվը փակված է»: Ա. Բաբաջանյանը և ընկերները հարցական նայեցին մարուցողին: Բեմի մոտ նստած մի մեծ խումբ ուրքի կանգնեց: Բա-

ժակները վեր բարձրացան «Առնո, Առնո, Առնո»: Նվագախումբը Առնոյի երգերն էր հնչեցնում: Վրացիներ, հայեր, ռուսներ էին...

Նույն պարկերը կրկնվեց Փարիզում, Մոնմարտրում: «Առնո, Առնո», - գոչում էին ռեսուրսանում նստածները Առնոյի երգի հնչյունների ներքո: Առնոն երջանիկ էր...

Իսկ Փարիզի Պլեյել սրահում հավաքված հարյուրավոր հայեր ու ֆրանսիացիներ, ուրքի կանգնած, Օրբելյանի նվագախմբի հետ միասին երգում էին Առնոյի երգը:

Եվ ամենից բարձր հնչում էր Առնոյի որդու՝ Արալիկի շայնը: Էս լակոտը շատ լավ է երգում, բոլորից լավ, լսեք, լսեք, - անընդհատ կրկնում էր Առնոն: Կառվարենցը հիացած գրկել էր նրան...

Մոսկվա: Նոր էր վերջացել կոմպոզիտորների համամիութենական համագումարը: Ընդունելություն էր: Արվեստագետները ջերմորեն ողջունում էին միմյանց:

Կեսօրին, կոնսերվատորիայի մեծ դահլիճում Էմիլ Գիլելար նվագել էր Բաբաջանյանի «Հերոսական բալլադը»: Դիրիժորը Եվգենի Սվետլանովն էր: Հաջողությունը կարարյալ էր:

Առնոն ուզում էր մրկել Կրեմլի պալատի մեծ դահլիճ: Նրան կանգնեցրեցին. Անցաթուղթ: Առնոն զարմացած նայեց. նա ոչ մի անցաթուղթ չունեք:

Դե ուրեմն չի կարելի: Առնոն իրեն չկորցրեց, ուղիղ նայեց սրուգողին, ապա թեքվեց՝ ցույց րալով քիթը: Սրուգողը ժպտաց. «Առնո Բաբաջանյան»:

«Ահա իմ այցետոմսը»: Եվ մարով ցույց րվեց դեմքին բազմած իր՝ ամբողջ երկրում հայրնի քիթը: Ահա այսպես:

Առնո Բաբաջանյանը ողջ է, երգում է, նվագում, կարակում: Կոնսերվատորիայի կողքով անցնելիս քեզ միշտ «շայն կրա» Բաբաջանյանի դաշնամուրի ակկորդը...

Էլի գրույցներ են պարում, նա լեզենդ է դառնում: Իսկ գերեզմանին ծաղիկներ չկան... «Եթե կոմպոզիտոր չդառնայի, կոմիկ դերասան կլինեի»...

Резюме

Министр культуры, спорта и по делам молодежи Арм. ССР (с 1980 по 1985гг.), главный редактор журнала "Советакан арвест" [с 1986 г., в 1996-97 гг. - почетный главный редактор (посмертно)] Гурген Ашотович Аракелян на основе интервью с композитором Арно Арутюновичем Бабаджаняном пишет о своих воспоминаниях "Если бы я не был композитором". Статья посвящена 75-летию со дня рождения композитора.

Summary

Ministry Of Culture, Youth And Sport RA, USSR (1980-1985), Editor-in-chief of the journal "Soviet Union Culture" (1996-1997) Gurgен A. Araqueyan writes his memories about Arno Babajanyan in the article "If I weren't a composer", based on the interview with the composer. The article is dedicated to the 75th birth anniversary of the composer.

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1-2(40-41)2011